

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հոկտեմբերի 12-ի N 1743 - Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հունիսի 4-ի N 574-Ն որոշման

**ԳԱԶԱԲԱՇԽԻՉ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ՍՊԱՌՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ
ՍՊԱՌՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ**

1. Սույն մեթոդիկայով հաշվարկվում է ապօրինի գազասպառման դեպքում գազամատակարարման ցանցից արտահոսած գազի քանակությունը:

Այն կարող է կիրառվել նաև ջերմոցային գազերի կադաստրի հաշվարկման և Հայաստանի Հանրապետության էներգետիկ հաշվեկշռի կազմման ժամանակ:

2. Սույն մեթոդիկայի իմաստով ապօրինի սպառում է համարվում, երբ գազամատակարարման ցանցից բնական գազ է սպառվում առանց գազամատակարարման պայմանագրի:

3. Գազամատակարարման ցանցում ապօրինի սպառման հետևանքով առաջացած անցքերից գազամատակարարման ցանցից արտահոսած բնական գազի քանակությունը հաշվարկվում է (1) բանաձևի հիման վրա՝ յուրաքանչյուր միջադեպի ուսումնասիրման արդյունքում կազմված ակտում ամրագրված տվյալների (միջադեպի հետևանքով առաջացած անցքի մակերես, արտահոսքի տևողություն, վնասված հատվածում բնական գազի ճնշում և բացարձակ ջերմաստիճան) հիման վրա՝

$$DV_{\text{ար}} = 0.21 \cdot P_q \cdot f \cdot \tau \cdot \varphi \cdot \frac{1}{\sqrt{\rho_q \cdot T_q}} \quad [\text{հազ. մ}^3]: \quad (1)$$

4. Միջադեպի հետևանքով գազամատակարարման ցանցի գազատարների լրիվ բացվածքի դեպքում գազամատակարարման ցանցից արտահոսած բնական գազի քանակությունը հաշվարկվում է (2) և (3) բանաձևերի հիման վրա.

1) եթե գազամատակարարման ցանցի վնասված հատվածում ճնշումը ցածր է 0.09 ՄՊա (բնական գազի հոսքի մինչկրիտիկական ռեժիմ), ապա գազամատակարարման ցանցի գազատարներից և սարքավորումներից արտահոսքերի քանակությունների հաշվարկման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$DV_{\text{ար}} = 0.555 \cdot f \cdot P_q \cdot \tau \cdot \varphi \cdot \sqrt{\frac{1}{\rho_q \cdot T_q} \cdot \left[\left(\frac{P_0}{P_q} \right)^{\frac{2}{k}} - \left(\frac{P_0}{P_q} \right)^{\frac{k+1}{k}} \right]} \quad [\text{հազ. մ}^3], \quad (2)$$

2) եթե գազամատակարարման ցանցի վնասված հատվածում ճնշումը հավասար կամ բարձր է 0.09 ՄՊա-ից (բնական գազի հոսքի կրիտիկական ռեժիմ), ապա գազամատակարարման ցանցի գազատարներից և սարքավորումներից արտահոսքերի քանակությունների հաշվարկման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

$$DV_{\text{ար}} = 0.124 \cdot P_q \cdot f \cdot \tau \cdot \varphi \cdot \sqrt{\frac{1}{\rho_q \cdot T_q}} \quad [\text{հազ. մ}^3], \quad (3)$$

5. Միջադեպի վերացման նպատակով գազամատակարարման ցանցի գազատարների կամ սարքավորումների դատարկման ընթացքում գազամատակարարման ցանցից արտահոսած բնական գազի քանակությունը հաշվարկվում է դատարկվող երկրաչափական ծավալում պարունակվող բնական գազի նորմալ պայմանների բերման բանաձևով՝ (4), որպես ելակետային ընդունվում են աշխատանքների կատարման ակտում ամրագրված տվյալները՝

$$DV_{\text{դատ}} = 2.271 \cdot 10^{-3} \cdot \sum \left(\frac{d^2 \cdot L}{T_q} \cdot \left(\frac{P_q}{Z} - P_0 \right) \right) \quad [\text{հազ. մ}^3], \quad (4)$$

6. Սույն մեթոդիկայում սահմանված բանաձևերում օգտագործված ֆիզիկական մեծությունների նշագրերի մեկնաբանությունները՝

$DV_{\text{ար}}$ - գազամատակարարման ցանցի գազատարների կամ տեխնոլոգիական սարքավորումների վնասվածքի պատճառով առաջացած անցքերից արտահոսած բնական գազի քանակությունն է,

$DV_{\text{դատ}}$ - վնասվածքի պատճառով առաջացած անցքերի վերացման նպատակով գազամատակարարման ցանցի գազատարի վնասված հատվածի կամ սարքավորումների (փական, կոճ և այլն) դատարկման հետևանքով գազամատակարարման ցանցից արտահոսած բնական գազի քանակությունն է,

P_q - բնական գազի բացարձակ ճնշումը՝ գազամատակարարման ցանցի վնասված գազատարում կամ սարքավորումներում [Պա],

P_0 - միջավայրի ճնշումն է, ուր արտահոսվում է գազը՝ անկախ գազատարների տեղադրման եղանակից, որն ընդունվում է հավասար տեղանքի մթնոլորտային ճնշման արժեքին [Պա],

T_q - բնական գազի բացարձակ ջերմաստիճանն է գազամատակարարման ցանցի վնասված գազատարում [K],

f - գազամատակարարման ցանցի գազատարների կամ տեխնոլոգիական սարքավորումների վրա առաջացած անցքի մակերեսն է [մ^2],

φ - գործակից, որը հաշվի է առնում բնական գազի արտահոսքի արագության անհավասարաչափությունը, $\varphi = 0.97$,

ρ_q - բնական գազի խտությունն է ստանդարտ պայմաններում [$\text{կգ}/\text{մ}^3$],

k - ադիաբատի ցուցիչն է բնական գազի համար, $k=1.3$,

Z - բնական գազի սեղմելիության գործակիցն է,

d - գազամատակարարման ցանցի վնասվածքի հետևանքով դատարկվող գազատարների ներքին տրամագծերն են [մ],

L - գազամատակարարման ցանցի վնասվածքի հետևանքով դատարկվող գազատարների երկարություններն են [կմ],

τ - գազամատակարարման ցանցից բնական գազի արտահոսքի տևողությունն է [ժամ], երբ արտահոսքի տևողությունը հնարավոր չէ որոշել, ապա արտահոսքի տևողության հաշվարկային մեծությունն ընդունվում է հավասար՝

ա. 960 ժամ՝ վերգետնյա գազատարից կամ տեխնոլոգիական սարքավորումից արտահոսքի դեպքում,

բ. 1440 ժամ՝ ստորգետնյա գազատարից կամ տեխնոլոգիական սարքավորումից արտահոսքի դեպքում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ